«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

_____ Մ.Գ.Մանուչարյան
12 սեպտեմբերի 2024թ.

# ԿԱՐԾԻՔ
# ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լուսինե Համազասպի Ծպնեցյանի «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

***Մասնակցում էին՝*** Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Լիանա Խաչատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.,* Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ստեփան Պապիկյան՝ *տեխ.գիտ.թեկնածու,* Ալվարդ Մատինյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ:*

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրների լուծումը կարևորվում է երկրի պարենային անվտանգության մակարդակի, արտադրության արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բարելավման և գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացման առումով:

Հանրապետության գյուղատնտեսության մրցունակության մասին որոշակի պատկերացում են տալիս գյուղատնտեսության արտադրական գործընթացների մեքենայացման ցածր մակարդակը և ձեռքի աշխատանքի բարձր տեսակարար կշիռը,

գյուղատնտեսությունում չափազանց դանդաղ տեմպերով արդիական տեխնոլոգիաների ներդրումը, արտադրական գործընթացների գերազանցապես ավանդական մեթոդներով իրականացումը և այլն: Մինչդեռ, արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակի բարձրացումը, ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորինս արագ ներդրումը և արտադրական գործընթացների արդիական մեթոդներով իրականացումը կարևոր պայման են հանդիսանում գյուղատնտեսությունում արտադրողականության և ոլորտի մրցունակության բարձրաց-ման համար:

ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը, մասնավորապես՝ դրան ուղղված քաղաքականության հիմնական ուղղությունների կատարելագործումը պահանջում է այս բնագավառում ընդգրկուն գիտական ուսումնասիրությունների իրականացում և դրանց հիման վրա հիմնավորված մոտեցումների և քայլերի առաջադրում, ինչն էլ պայմանավորել է ուսումնասիրվող թեմայի կարևորությունն ու արդիականությունը:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է՝ ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը: Այդ նպատակի իրականացման համատեքստում ատենախոսության շրջանակներում նախանշվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել ճյուղի մրցունակության էությունը, այն պայմանավորող գործոնները, գնահատման չափանիշները, ցուցանիշները և մեթոդները,
- առաջադրել գյուղատնտեսության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշ և դրա հիման վրա գնահատել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության մակարդակը,

- հիմնավորել գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության իրականացման հնարավորությունները,
- վերլուծել ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող ցուցանիշների փոփոխության միտումները,
- ուսումնասիրել գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության միջազգային փորձը,
- գնահատել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցությունը,
- գնահատել գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների քանակական ազդեցությունը,
- առաջադրել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները և գնահատել դրանց արդյունավետությունը:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ իրականացված վերլուծությունների և հետազոտությունների արդյունքներից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալները.

1. Առաջադրված գյուղատնտեսության մրցունակության ինտեգրալային ցուցանիշի հիման վրա գնահատվել է ՀՀ գյուղատնտեսության ներքին մրցունակության մակարդակը:
2. Բացահայտվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակության մակարդակը բնութագրող առանձին արդյունքային հատկանիշների և ճյուղին բյուջետային հատկացումների միջև քանակական կապը:
3. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում բացահայտվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող առանձին արդյունքային հատկանիշների վրա տարբեր գործոնների համատեղ ազդեցությունը (այդ թվում՝ դիտարկված գործոններից յուրաքանչյուրի ազդեցության չափը):

4. Առաջադրվել են ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղիները և գնահատվել առանձին ուղիների արդյունավետությունը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ինչպես նաև ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Գյուղատնտեսության մրցունակության տեսամեթոդական հիմքերը» գլխում անդրադարձ է կատարվել ճյուղի մրցունակության էության բացահայտմանն ու այն պայմանավորող գործոնների ուսումնասիրությանը, գյուղատնտեսության մրցունակության գնահատման չափանիշներին, ցուցանիշներին և մեթոդներին, ինչպես նաև գյուղատնտեսության մրցունակության բարձրացման պետական քաղաքականության իրականացման հնարավորություններին:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության արդի վիճակը, դրա բարելավման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները» գլխում իրականացվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը բնութագրող հիմնական ցուցանիշների փոփոխության միտումների վերլուծություն, գյուղատնտեսությանմրցունակության բարձրացման քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրություն, ինչպես նաև անդրադարձ է կատարվել ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման վրա ներկայիս պետական քաղաքականության ազդեցության գնահատման ու այդ քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների բացահայտմանը:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման առաջարկվող քաղաքականության հիմնական ուղղությունները» գլխում իրականացվել է ՀՀ գյուղատնտեսության մրցունակությունը պայմանավորող գործոնների ազդեցության քանակական գնահատում, առաջարկվել են ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղիներ, ինչպես նաև իրականացվել է

ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման առաջարկվող քաղաքականության հիմնական ուղղությունների արդյունավետության գնահատում:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսությունում առաջարկված է գյուղատնտեսական ճյուղի մրցունակության ինտեգրալային ցուցանիշի հաշվարկ (բանաձև 1.2.2, աղյուսակ 1.2.1, էջ 31-34), որի համար օգտագործվել են 8 հարաբերական հաշվարկային ցուցանիշներ: Ցուցանիշներից «ԳՀԱՑԲՏՀ՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ինդեքսը միավոր ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների հաշվով (%)» պարզ չէ երկու տեսանկյունից. համախառն արտադրանքի փոփոխության ինդեքսը թե՞ համախառն արտադրանքը ցանքատարածությունների ու բազմամյա տնկարկների հաշվով, և ինչո՞ւ միայն ցանքատարածությունների ու բազմամյա տնկարկների հաշվով, այլ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի կամ հողատեսքի հաշվով:
2. Աղյուսակ 2.3.1-ում ներկայացված է «ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ճյուղում հատկացումները և դրանցով որոշակիորեն պայմանավորված ցուցանիշները՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը, գյուղատնտեսության արտադրանքի ծավալի ինդեքսը, արտադրողականությունը և ապրանքայնության մակարդակը»: 2007թ.-ի պետական բյուջեի 741.1 միլիոն դրամ հատկացումները 2022թ.-ին ավելացել են մոտ 50 անգամ՝ 37130.2 միլիոն դրամ, «դետերմինացիայի գործակցի համաձայն, ուսումնասիրվող տարիներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի տատանումների շուրջ՝ 25.18 %-ը պայմանավորված է գյուղատնտեսությանը բյուջետային հատկացումների տատանումներով (R^2=0.2518), իսկ մնացած 74.82 %-ը՝ այլ և պատահական գործոնների ազդեցությամբ»: Հետևաբար ինչպե՞ս է ատենախոսը հիմնավորում պետական բյուջեից հատկացումների ավելացումը (եզրակացություններ 7 և 15.6 կետեր):
3. Աղյուսակ 3.1.1-ում հաշվարկված է արտադրողականությունը և որպես ազդող գործոններ ներկայացված են միայն ցանքատարածությունների, ծառայությունների սակագների, բուսաբուծության և անասնաբուծության ճյուղի

համախառն արտադրանքի փոփոխությունները: Սակայն, մեր կարծիքով, գործոնների շարքում կարող էին լինել արտադրողականությունը ուղղակիորեն պայմանավորող պայմանական անասնագլխաքանակի փոփոխությունը, գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման աստիճանը:

4. Աշխատանքում առկա որոշ բանաձևերում արված նշանակումները հստակեցման կարիք ունեն, մասնավորապես, էջ 27-ում ներկայացվել է առանձին արտադրանքների մրցունակության գործակցի բանաձև, որի տառային նշանակումները վերագրվել են «j-րդ անդամ–պետությանը»: Ենթադրվում է, որ այն կիրառելի է ԵԱՏՄ անդամ երկրների շրջանակում, որի մասին աշխատանքում չկա որևէ նշում: Եթե նկատի է առնվել, որ առաջարկվող բանաձևը կիրառելի է ցանկացած երկրի նկատմամբ, ապա տառային նշանակումներում պետք է հանել «j-րդ անդամ-պետություն» արտահայտությունը: Ատենախոսությունում առաջարկվել է գյուղատնտեսության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշի բանաձև, որի բաղադրիչ ցուցանիշների բացատրություններում դրանք ներկայացվել են որպես ինդեքս: Օրինակ, ԳԱԻ-աշխատանքի արտադրողականության ինդեքս: Ենթադրվում է, որ դա աշխատանքի արտադրողականության շղթայական աճի տեմպն է, որի մասին չկա որևէ նշում: Բացի այդ, բանաձևի որոշ ցուցանիշներ հնարավոր է հաշվարկել առանձին արտադրանքների կտրվածքով, որը հնարավոր չի վերագրել ամբողջ ճյուղին (ապրանքայնության, ինքնաբավության մակարդակ):
5. Աղյուսակ 2.1.8-ում (էջ 67) ներկայացված են ՀՀ գյուղատնտեսական հիմնական մթերքների շահութաբերության մակարդակները, որոնք այնքան էլ ցածր չեն, որ բնութագրի ճյուղի ցածր եկամտաբերությունը (ինչպես նշված է աշխատանքում):
6. Ատենախոսությունում հիմնական շեշտադրումը դրված է գյուղատնտեսության զարգացմանը և դրա արդյունավետության բարձրացմանը, որը թեև կնպաստի ճյուղի մրցունակության բարձրացմանը, սակայն հետազոտության նպատակը (թեման) գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման ուղղությունների բացահայտումն ու հիմնավորումն է: Ուստի հիմնվելով միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների վրա, կարելի էր առանձնացնել քաղաքականության որոշ գործիքներ ու մոտեցումներ, որոնք հնարավոր կլիներ տեղայնացնել ՀՀ-ում:
7. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի որոշ թերություններ, օրինակ՝ Աղյուսակ 2.1.5-ում (էջ 59) հետազոտության ժամանակահատվածը տարբերվում է մյուսներից (նշված է 2016-2021թթ. պետք է լինի 2012-2022թթ.), էջ 32-ում նշված է՝ «[ԻՄՄ]_ԷԱԳ- ՀՀ ազգային պարենային հաշվեկշռում ընդգրկված առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքի ինքնաբավության միջին

մակարդակը էներգետիկ արժեքով գնահատված»: Սակայն ինքնաբավության մակարդակը գնահատվում է %-ով, այլ ոչ թե կկալ-ով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Համազասպի Ծպնեցյանի «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է, որն ուղղված է ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծման ուղիների առաջադրմանը:

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում ստացված արդյունքները և դրանում ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և շահագրգիռ այլ պետական մարմինների կողմից՝ ոլորտի ռազմավարական, ծրագրային փաստաթղթերի մշակման, վարվող պետական քաղաքականության, կիրառվող պետական աջակցության ծրագրերի կատարելագործման գործընթացներում: Նշված արդյունքները կարող են օգտակար լինել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրերի, միջոցառումների և մոտեցումների մշակման, ինչպես նաև գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների, մասնավոր հատվածի ներդրողների, ագրոպարենային ոլորտի հետազոտողների համար:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 10 (տաս) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Լուսինե Համազասպի Ծպնեցյանի «ՀՀ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 10 (տաս) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ–ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ

աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտությունն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (12.09.2024թ., արձանագրություն թիվ 16):

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ գիտաշխատող,**
**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ** **Լ.Խաչատրյան**

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ**
**Ավագ գիտաշխատող,**
**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ** **Ա.Մատինյան**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Լ.Խաչատրյանի և նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Մատինյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝*

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,**
**տնտեսագիտության թեկնածու** **Ե.Ա.Հակոբյան**
**«12» սեպտեմբերի, 2024թ.**
**Կ.Տ.**